


ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔ



ՄԱՐԴՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ©

Մերձավոր Արևելքի աշխարհագրությունը լայն է: Ներկայացված քարտեզը և դրա հետագա աշխարհագրական նկարագրությունը ընդգրկում են հիմնականում Նրա կենտրոնական հատվածը: Այսպիսով, Կենտրոնական Մերձավոր Արևելքի հակիրճ բնութագրումը կարող ենք սկսել Սև ծովից, որը գտնվում է ուրվագծված աշխարհագրության հյուսիսում: Նրա անմիջական հարավում գտնվող լեռնային տարածաշրջանը Հայկական բարձրավանդակն է, որից սկիզբ են առնում Եփրատ և Տիգրիս նշանավոր գետերը և հոսում դեպի Պարսից ծոց: Վերջինս գտնվում է հարավ-արևելքում: Կասպից ծովը գտնվում է հյուսիս-արևելքում: Արևմտյան Իրանը տարածվում է այդ ծովերից դեպի հարավ: Անատոլիան, որը հունարենից թարգմանաբար նշանակում է «արևելք», գտնվում է հյուսիս-արևմուտքում: Արևելյան միջերկրածովյան ափը ընկնում է այդ տարածաշրջանից հարավ: Սուրբ Երկիրը գտնվում է Նրա ափին: Մյուս կողմից, «Բարեբեր Կիսալուսինը» հիմնականում զբաղեցնում է Մերձավոր Արևելքի հյուսիսային հատվածը: Նրա ամենահյուսիսային հատվածը Հայկական բարձրավանդակի ծայր հարավարևմտյան տարածաշրջանն է, որն աշխարհագրորեն Անատոլիա չէ: Կիսալուսնի միջերկրածովյան ափը հայտնի է որպես Լևանտ: Արևելքում այն ընդգրկում է Միջագետքի մեծ մասը: Հնագիտական նշանավոր հայտնագործությունների արդյունքում, որոնք վկայում են վաղագույն ժամանակներում մարդկության մեծ մշակութային նվաճումների մասին, այս տարածաշրջանը հետագա հնագիտական հետազոտությունների համար անվանվեց «**Ոսկե եռանկյունի**», որի

գագաթային մասը վերը նշված Հայկական բարձրավանդակն է: Նրա հարավային հատվածը, սակայն, ընդգրկում է միայն հյուսիսային Սիրիան և Իրաքը՝ այսինքն զգալիորեն սահմանափակ տարածք: Պորտասարի կառուցումը ժամանակագրվում է Սառցապատման դարաշրջանի ավարտով: Հիրավի, այս պայմաններում նույնիսկ մ.թ.ա. 6-րդ դարով թվագրվող *աշխարհի բաբելոնյան քարտեզը* [Հայաստան և Եվրոպա \[Էջ 49\]](#) գործնականում դառնում է ժամանակակից փաստաթուղթ:

Պորտասար, Մեծամոր, Ախուրյան, Քարահունջ

Խնդրո առարկա նշանավոր հայտնագործությունը՝ Պորտասարը (Ոչ հայկական անունը՝ Գյոբեքլի թեփե), ինչպես վերը նշվեց, գտնվում է «Ոսկե եռանկյունու» տարածքում, հյուսիսային Եփրատի տարածաշրջանին կից և Սիրիայի հյուսիսային սահմանից անմիջապես վերև: Ինչպես արդեն նշվեց, «Ոսկե եռանկյունու» ծայր հյուսիսային մասը Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան տարածաշրջանն է: Հիրավի, բարձրավանդակի Էական սոցիոլոգիական ժամանակագրությունը ծրարված առանձնահատուկ աշխարհագրությամբ ճառագում է կողմնացույցի բոլոր ուղղություններով: Պորտասարի հնագիտական ուսումնասիրությունը, որը սկսվել է 1990-ականների կեսերից, վկայում է հնագույն ժամանակներում շատ զարգացած մշակույթի մասին: Այն նոր հարթություն է ստեղծում, որը դեռևս դուրս է մնում իմացության ներկայիս չափանիշներից: Ներկայիս նորմերի սահմաններում է օրինակ Մեծամորը, որը գտնվում է Հայկական բարձրավանդակի արևելյան հատվածում: Տեղագրական առումով այն Արարատի լեռների շուքի մեջ է գտնվում: Ներկա հետազոտությունները վկայում են, որ հնավայրում հայտնաբերված խեղեցիկներ թվագրվում է մ.թ.ա. 3500 թվականով: Այն նաև կարևոր մետաղագործական կենտրոն է եղել, որտեղ բրոնզ են արտադրել և երկաթ ծուլել: Պորտասարն, ինչպես նշվեց, այս պարապետներից դուրս է գտնվում: Տաճարական համալիրն, որը հիմնադրվել է մ.թ.ա. 10000-9000 թթ., նախորդում է խեցեգործությանն ու մետաղագործությանը: Այն գտնվում է ցածր սարահարթի վրա, որն անմարդաբնակ էր և ջրի աղբյուր չուներ: Ռադիոածխածնային անալիզների արդյունքները վկայում են, որ հնավայրի տարբեր շերտերը թվագրվում են մ.թ.ա. 9130 - 7370 թթ.: Առ այսօր հնավայրի միայն 5% -ն է պեղված: Նրա տպավորիչ ճարտարապետությունն ու T- ձև սյուների վրա արված նրբագեղ փորագրությունները հազարավոր տարիներ առաջ են ընկնում իրենց ժամանակից: Հնավայրում կան ավելի քան 200 այդպիսի սյուներ՝ որոշները մինչև 6 մետր բարձրությամբ և կշռելով մոտ 6 տոննա: Ամենամեծ սյունը կշռում է մոտ 50 տոննա, իսկ նրա T-վերնամասը 3 մետր լայնություն ունի: Համալիրը լքվել է մ.թ.ա. 8-րդ հազ. վերջին և նրա բոլոր շերտերն ի վերջո լցվել են:

Պորտասարի հետ լրացուցիչ կապ են դռնադրում Հայկական բարձրավանդակում վերջերս հայտնաբերված գեոգլիֆները, որոնք գտնվում են Ախուրյան գետի արևելյան հատվածում: Դրանք

Պորտասարի հայտնաբերումը վկայում է, որ հնագույն ժամանակաշրջանում, հավանաբար մ.թ.ա. 10000 թ. սկսած (Սառցապատման դարաշրջանի ավարտ, որը նաև Նոյի Մեծ ջրհեղեղի հետ է կապվում), Մերձավոր Արևելքի «Ոսկե եռանկյունու» տարածքում գոյություն ուներ շատ զարգացած մշակույթ: Հավանաբար այդպիսի զարգացած մշակույթներ կային նաև աշխարհի այլ մասերում, որոնք բարենպաստ աշխարհագրական դիրքի շնորհիվ սառցապատումից նվազագույն վնասներ են կրել: Դժբախտաբար, նրանց բարձր գիտելիքները չկարողացան անցնել նաև այլ տարածաշրջաններ և ի վերջո կորսվեցին: Հաջորդ քաղաքակրթությունը, որը բարձր արվեստ և ճարտարապետություն ստեղծեց, հին եգիպտական քաղաքակրթությունն է՝ շուրջ 6500 տարի անց: Դա լուրջ թիվ է, որը վկայում է մեծ հետընթացի մասին: Չնայած դրան, կարևոր է պարզել, թե ինչպե՞ս են Պորտասարը կառուցողները ձեռք բերել իրենց գիտելիքները: Շումերները, մյուս կողմից, պնդում էին, որ իրենց հայտնագործությունները և նորամուծությունները նրանք ստացել են վերևում գտնվող աստվածներից, ասես նրանք այլ մոլորակից են եկել: Նման դեպքերում ավելի լավ է ոտքը պահել այս մոլորակի վրա: Վերջում տեղին է ավելացնել, որ ոչ միայն գիտությունը - պարբերաբար փառքով ցողված - այլ նաև մարդկության նորարարական շնորհը պետք է հաշվի առնվի մեծ նշանակալիությամբ:



Աշխարհի բաբելոնյան քարտեզը

Հայաստանը և Եվրոպան. քարտեզագրական հեռանկարները տեղին կլինի եզրափակել զգալիորեն ավելի վաղ ժամանակաշրջանի վկայությամբ: Խելամիտ է սկսել մ.թ.ա. 6-րդ դարի աշխարհի բաբելոնյան քարտեզից: Այն կավե տախտակ է, որի վրա պատկերված է աշխարհի ամենահին

քարտեզը՝ ուղեկցված սեպագիր արձանագրություններով: Այն այժմ ցուցադրվում է Բրիտանական թանգարանում: Առաջին անգամ քարտեզը հրատարակվել է 1899 թ.-ին: Այն Արևմուտքում հայտնի աշխարհի պատկերն է, որը կենտրոնում Միջագետքն է, եզերված շրջանաձև շրջանակով, որը մեկնաբանվում է որպես ջուր, խորհրդանշելով ծովի աղի ջրերը: Եռանկյունաձև ելուստները ներկայացնում են ծովից այն կողմ գտնվող տարածաշրջանները: Շրջանակը ներառում է նաև տասնյակից ավել քաղաքներ ու թագավորություններ: Արարատի երկիրը գտնվում է հյուսիսարևելյան հատվածում և հիշատակվում է որպես Ուրարտու՝ այդ ժամանակաշրջանի հայկական թագավորություն: Դեպի հարավ, քարտեզի կենտրոնական հատվածում, Եփրատ գետն է, որը հոսում է դեպի հարավ: Բաբելոնը տեղակայված է այդ նշանավոր գետի վրա: Եփրատը և Տիգրիսը բխում են Հայկական Լեռնաշխարհից և հոսում դեպի Պարսից ծոց: Երկու գետերի միջև եղած բերրի տարածաշրջանը - ներկայումս Իրաքում - աշխարհագրորեն կոչվում է Միջագետք: Ավելի վաղ ժամանակներում՝ մ.թ.ա. 4000 թ.-ին նրա հարավարևելյան տարածքը բնակեցված էր շումերների կողմից: Մ.թ.ա. 3200-ին շումերները ստեղծեցին Էին մի շարք նշանավոր քաղաքներ և հայտնագործեցին գիրը: Այդ ժամանակ, շումերներն, ամենայն հավանականությամբ, Մոլորակի ամենաառաջադեմ մշակույթը /քաղաքակրթությունն էին: Այնուամենայնիվ, նրանք ի վերջո դուրս մղվեցին աքադացիների և բաբելոնցիների կողմից: Ասորեստանը՝ ևս մեկ ավելի ուշ շրջանի պետական կազմավորում գտնվում էր Միջագետքի հյուսիսային հատվածում և հանդիսանում Հայաստանի հարավային հարևանը: Երբեմն վերջինիս հարավային տարածաշրջանները գրավվում էին հաստատական ասորեստանցիների կողմից: Միջագետքի բոլոր վերոհիշյալ ժողովուրդները խոսում էին սեմական լեզուներով, բացառությամբ շումերների:

Հետաքրքիր է նաև նշել, որ Բրիտանական թանգարանում պահվող հին սեպագիր կավե տախտակները վկայում են, որ Նոյի տապանը կառուցվել է Շումերում և նավարկել դեպի հյուսիս: Աստվածաշնչյան պատմությունն եզրափակում է այս հիշատակությունները, նշելով, տապանը հանգրվանել է Արարատի լեռների վրա: Մի շարք համապատասխան գործոններ գոյություն ունեն Հայկական Լեռնաշխարհի և Շումերի միջև կապերի առկայության համար [Աստվածաշնչյան սրբազան լեռնաշխարհը \[Էջ 5\]](#): Բացի այդ, Եփրատ և Տիգրիս գետերը, հանդիսանալով կապի բնական ուղիներ, կարող էին զգալիորեն խթանել այդ կապերը:



*Թ. Ս. Քահվե,
Արարատ Ժառանգություն,
Լոնդոն, մայիս, 2020*